



Պեյրուժ, 18 Ապրիլ 2020

Նամակ թիվ 136

Վաչե Նամարեան
(Ստեփանյան - Լիբանան)

Վիգեն Աւագեան
(Ստեփանյան - Լիբանան)

Թալին Օրտոգլեան
(Դամասկոս - Լիբանան)

Մանուկ Քեօշկերեան
(Սուրիա)

Օշին Փիրումեան
(Հայաստան)

Դաւիթ Յակոբեան
(Հայաստան)

Հրաչ Սիսեռեան
(Ֆրանսա)

Ֆելտի Թաժրա
(Մուլտ)

Արմանո Փիլինեան
(Արևմտեան Մ. Նահանգներ)

Վահե Թամաշեան
(Արևելեան Մ. Նահանգներ)

Մոսիկ Թովուգեան
(Դամասկոս)

Արմանո Թորգոմեան
(Հարավային Ամերիկա)

Տիրան Վահրատեան
(Աստրալիա)

ԾՆՈՐՀԱԲՈՐԱԳԻՐ

Մեծայարգ Պրն. Արայիկ Յարութիւնեան՝

Նախագահ Արցախի Հանրապետութեան

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը աշխարհասփիւռ իր 26 Շրջաններու 111 մասնաճիւղերուն անունով կը շնորհաւորէ Արցախի նախագահ Ձեր ընտրութիւնը՝ մաղթելով որ այդ ընտրութիւնը կը ծառայէ Հանրապետութեան զարգացման եւ Արցախ-Հայաստան-Սփիւռք եռամիասնութեան ամրապնդման:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը պաշտօնապէս մէկուկէս տարիէ կը գործէ Արցախի մէջ, սակայն Արցախն ու արցախահայութիւնը տեւական ներկայութիւն եղած են ու կը մնան միութեան համահայկական աշխատանքներուն մէջ: Միութիւնը ամէն տարի կը մասնակցի Արցախի համար կատարուած նուիրահաւաքներուն, ձեռնարկներուն եւ Արցախի հայութեան բարօրութեան եւ բարեկեցութեան նպաստող ծրագիրներուն:



Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միություն - Կեդրոնական Վարչություն
HOMENETMEN Sports and Scouting Organization World Committee

Վաչէ Նաճարեան
(Ստեփանյան - Լիբանան)

Վիգէն Աւագեան
(Ստեփանյան - Լիբանան)

Թալին Օրտոքեան
(Գրամատյան - Լիբանան)

Մանուկ Քեօշկեան
(Սուրիա)

Օշին Փիրումեան
(Հայաստան)

Դաւիթ Յակոբեան
(Հայաստան)

Հրաչ Սիսեռեան
(Պրանս)

Ֆելտի Թաթրա
(Շուէտ)

Արմանտ Փիլինեան
(Սրբոստան Մ. Նահանգներ)

Վահէ Թանաշեան
(Սրբոստան Մ. Նահանգներ)

Մոսիկ Թովուգեան
(Գրամատյան)

Արմանտ Թրգումեան
(Հարաւային Ամերիկա)

Տիրան Վահրատեան
(Աստրալիա)

Մեր յոյսն ու ակնկալութիւնն է, որ Ձեր նախագահ ընտրութեամբ առաւել թափ ու ծաւալ կը ստանան նորահաս սերունդներու մարմնակրթութեան աշխատանքները եւ ազգային առողջ դաստիարականութեամբ, արի եւ տիպար քաղաքացիներու պատրաստութեան ջանքերը, որոնց լծուած է մեր միութիւնը՝ ինչպէս ամբողջ հայաշխարհի, նաեւ Արցախի մէջ: Այս առիթով ընդունեցէք մեր շարունակական գործակցութեան պատրաստակամութիւնը, ի շահ Հանրապետութեան վերելքին եւ ի խնդիր պետականութեան յառաջընթացին:

Նորանոր յաջողութիւններու բարեմաղթութիւններով, Ձեզի կը ցանկանք քաջառողջութիւն, անսպառ եռանդ եւ արգասաբեր գործունէութիւն:

Եղբայրական բարեւներով,

Ի Դիմաց՝

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան

Ատենադպիր՝

Ատենապետ՝

Վիգէն Աւագեան



Վաչէ Նաճարեան